

Տ. ԽՈՐԵՆ ԱՔԵՂԱ ՏՈՎՆԱՆՆԻՍՅԱՆ

ՆԱԲԱՆԵԿԱՆ ԾԻՍԱՇԱՐԻ ՆՇԱՆԻ ՕՐՆՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԸ

Նշանադրությունը հարսնացուի և փեսացուի, ինչպես նաև նրանց ընտանիքների փոխադարձ համաձայնության եկեղեցական վավերացումն էր, որը քահանան կատարում էր նշանի օրհնությամբ:

Նախանկան արարողությունների շարքում նշանդրերին վերապահված կարևորությունը երևում է նրանից, որ քահանան այն կատարում էր ոչ թե որպես ապագա գույգին ուղղված օրհնության բարեմաթյանի խոսք, ինչպիսին որ ասվում էր խոսքկապի ժամանակ, այլ եկեղեցական առանձին կանոնով, ինչպես որ այնուհետև առանձին կանոններով կատարվում էին և Նանդերծօրհները՝ հարսանյաց հանդերձների օրհնությունը, ապա և Պսակն ու Թագվերացը:

Ինչպես գրում է ազգագրագետ Ռ. Նահապետյանը. «Պարմական Նայասրանի գրքերն բոլոր ազգագրական մարգերում գյուղական համայնքի գործող իրավասովորությանը կարգի պայմաններում ամուսնությունը պաշտոնապես ճանաչվում և իրավական կիրարկման ձև էր ստանում հարսանեկան ծեսերի ու սովորույթների բազմաթիվ համակարգի իրագործումից հետո միայն: Նախանկան ծիսաշարը ներառում էր կենցաղավարման մեջ հաջորդական երեք հիմնական փուլ՝ խնամախոսություն (աղջիկը, ուզնկան, խոսկապ), նշանադրություն (նշանդրեր, խալանկություն, կթխան, խղաթ կամ հարսնապեսներ) և բուն հարսանիք (հարսնած, պսակ և առագաստ կամ մեկտեղի)»¹:

Այժմ տեսնենք, թե հարսանեկան ծիսաշարի՝ մինչ եկեղեցում կատարվող պսակը ընկած շրջանի իրար հաջորդող փուլերից յուրաքանչյուրում ինչ մասնակցություն էր վերապահված քահանային և ըստ այդմ՝ եկեղեցական արարողություններին, և դրանք ինչպես էին կապվում պսակի խորհրդի կանոններից յուրաքանչյուրի հետ:

Խնամախոսությունը սկսվում էր աղջիկընտել, որի ժամանակ տղայի մայրը մի քանի կանանց հետ գնում էր տեսնելու ընտրելիք աղջկան: Եթե հավանում էին նրան, ապա իրենց ազգականներից հարգանք վայելող մի տղամարդու ուղարկում էին աղջկա տուն: Դա կոչվում էր ուզնկանություն և «ամուսնահարսանեկան ծիսաշարի պաշտոնական առաջին արարողությունն էր»²: Ինչպես բառն է հուշում, այն նշանակում է աղջկան ուզել: Վերջինս եթե մերժմամբ չէր ավարտվում և որոշակի համաձայնություն էր ձևառնում, ապա տեղի էր ունենում խոսկապը՝ ձեռք բերված նախնական պայմանավորվածության առաջին վավերացումը, որի համար տղայի կողմի ներկայացուցիչները աղջկա տուն էին գնում արդեն քահանայի գլխավորությամբ:

Աղջիկընտելի և ուզնկանությանը քահանան չէր մասնակցում, քանի որ այդ փուլում,

1 Ռ. Նահապետյան, Աղանիքախայերի ամուսնահարսանեկան սովորույթներն ու ծեսերը, Եր., 2007, էջ 64:

2 Անդ:

երբ համաձայնությունը դեռևս ձեռք չէր բերվել կողմերի միջև, խիստ անպարզաճ կլինե՞ր մերժել մի խմբի, որը գլխավորում էր քահանան, այդ պարճառով քահանան ամուսնահարսանեկան արարողություններին սկսում էր մասնակցել փոխադարձ համաձայնություն ձեռք բերելուց հետո և ըստ էության գալիս էր օրհնելու ու հոգևոր վավերացում հաղորդելու ձեռք բերված համաձայնությանը:

Խոսքկապով ավարտվում էր խնամախոսության փուլը, և սովորաբար յոթից փաս օր անց կատարվում էր նշանադրությունը:

Նշանդրերի հոգևոր ծիսական արարածություններին էր և այն, որ պայմանավորված հնուց եկող հավաքայիքներով, նշանդրերի համար ցանկալի օրեր էին դիտվում չորեքմուսր, ուրբաթմուսր և կիրակմուսր, այսինքն այս օրերին նախորդող արևամուսրի ժամը, քանի որ երեքշաբթիի, հինգշաբթիի և շաբաթի արևամուսրները համարվում էին պարզաբնության հարմար ժամանակ և օրեր³:

Ժամանակային առումով էլ նշանդրերը տարածված էր կատարել հարկապես Ծաղկագարդին ու Վարդավառին, և այս փոներին կատարվող նշանադրությունները ունեին իրենց յուրօրինակ ժողովրդական ծիսակարգը⁴:

Նշանդրերին տղայի կողմը գնում էր արդեն անհամեմատ մեծ և ներկայացուցչական կազմով՝ տղայի հայրը, քավորը, քավորկինը, քեռին, հորեղբայրը, ավագ եղբայրը, մայրը, հորեղբոր կամ եղբոր կինը և վերջապես գյուղի ռեսն ու քահանան: Ռեսն և քահանայի մասնակցությունը խորհրդանշում էր կնքվող համաձայնության վավերացումը գյուղի հոգևոր և աշխարհիկ իշխանության կողմից, որով նշանադրությունը արդեն հասարակական հնչեղություն էր ստանում: Այս մասին Սյր. Լիսիցյանը գրում է, որ քահանան օրհնում էր մարանին, իսկ փանուսերը «բաժանում ներկա եղողների մեջ նշանի հետ բերված սրբազան հալվան, ինչպես և երկու կողմերի մոտիկ ազգականների ներկայությունը, տալիս էր **նշանավճիռ** հասարակական բնույթ, որով արդեն վկայվում էր տղայի և աղջկա միջև հաստատվելիք կապի վավերականությունը և ընդգծվում էր, որ դրա համար ստացված է և՛ համայնքի, և՛ փոխմի համաձայնությունը, որն, անշուշտ, պահանջվում էր նախնական փոհմական կարգերի ժամանակ»⁵:

Նշանդրերի նշանը մարանին էր: Նշանդրերի ժամանակ քահանան օրհնում էր հարսնացուի համար բերված նշանը, զգեստները և զարդերը: Քահանան օրհնում էր այս ամենը և հերթով տալիս ու հագցնում հարսնացուին: Քահանան նշանդրերի ժամանակ կատարում էր նաև հաց կտրելու օրհնությունը: Ինչպես գրում է Ե. Լալայանը. «Բերում են երեք հար լավաշ հաց, քահանան վերցնում է, դնում միմյանց վրա ու առաջարկում երկու նոր խնամիներին ծայրերից բռնելու... երկու նոր խնամիները ձգում են իրենց բռնած հացերը, կտրում: Տղայի փերն աշխատում է մեծ մասը յուր կողմն ունենալ և դնում է ծոցը, որ փանի յուր փուն, հավաքալով, որ սրա հետ և հարսնացուի դստաթը պիտի գնա յուր փուն»⁶:

3 Տե՛ս անդ, էջ 77:

4 Ե. Լալայան, Երկեր, հր. 2, Երևան, 1988 էջ 314, փնն նաև էջ 98 և 341:

5 Սյր. Լիսիցյան, Զանգեզուրի հայերը, Երևան, 1969, էջ 186:

6 Ե. Լալայան, Մուշ-Տարսն, ազգագրություն, «Ազգագրական հանդես», XXVI գիրք, Թիֆլիս, 1916, էջ 158:

Նշան օրհները և հաց կտրելը համարվում էր կեսպասակ⁷, և որպես հաջորդ քայլի բարեմադրանք՝ նշանդրերին առում էին. «Աստված Սուրբ Պսակին արժանացնե»⁸:

Ազգագրական մի շարք շրջաններում նշանի մարանին մինչ աղջկան փայլը փանում և օրհնում էին եկեղեցում, որով նշանդրերին քահանայի գալը արդեն պարտադիր չէր դառնում: Ամիդում նշանի մարանին մինչ աղջկան փայլը եկեղեցում օրհնելու մասին Տ. Մկրտիչը գրում է. «Յաջորդ կիրակին «նշանություն» է: Աղջկան ազգականներն հաւաքուած կ'սպասեն: Տղան կողմէն մի քանի այրեր նշանը օրհնեցնելու համար եկեղեցի կ'երթան քահանային, որն ըստ պարաշաճի օրհնելէն վերջ նշանը կը փանեն աղջկան փունը»⁹:

Նշանդրերի կես պսակ լինելը և եկեղեցական հանդիսավոր ծեսով կատարվելը լավագույնս ներկայացված է Գր. Ն. Գալուստյանի՝ Մարաշին նվիրված համարում, ուր նշանի օրհնության ծեսը պատկերվում է այս ծեսին նախորդող և հաջորդող ժողովրդական արարողությունների ընդհանուր համարըստում:

Ասվում է, որ Մարաշում խոսքկապին հաջորդում է պաշտոնական նշանդրերը, երբ կիրակիի պատարագից հետո «փայլին և աղջկան պարագաները և կնքահայրները և բարեկամները կը մնային եկեղեցիին մէջ: Կը սկսէր նշանախօսական արարողութիւնը՝ յարուկ շարականներով և աղօթքով: Քահանաներու և փրագումներու ներկայութեամբ նշանախօս քահանան հանդիսաւորապէս աղջկան հօր կամ կնքահայրին կը հարցնէր. «Աստուածային հրամանաւ, Առաքելոց կանոնաւ, Նայրապետագիր օրէնդրութեամբ, ի մէջ Սրբոյ Եկեղեցոյս հաւաքեալ ժողովրդոց ներկայութեամբ, հաստ լինելով և մեղօք չլինելով, այսինչեան այսինչին աղջիկը՝ այսինչեան այսինչին փայլուն փունը՝ Այո: Դուն ալ առի՞ր՝ Այո: Այս հարցումը երկուս կըլլար նշանախօս քահանային կողմը ու փոխադարձ յօժարութեան հանդիսաւոր յայտարարութենէ ետքն էր, որ նշանախօսութիւնը օրհնուած կըլլար կրօնական ծեսով: Խօսեցեալ աղջիկը և փայլուն մարանի կամ ոսկի գարդեր կը փոխանակէին: Կերգուէր «Նշանաւ ամենայաղթ խաչի Բո» շարականը, կը հնչէր ծննդան: Յետոյ պարագաները իրար կը շնորհաւորէին և այս կերպով օրհնուած նշանէն ետքը բաժանումը շատ մեղադրելի էր, որովհետեւ այս կէս պսակ կը համարուէր: Նշանածներ մինչև հարսնիք, փօնի կամ նշանատր օրեր, մասնաւորապէս փայլի ծնողներ, նւերներ կը փոխանակէին ու կը վայելէին անվերջ ուրախութիւններ ու կը ջանային իրար երջանկացնել»¹⁰:

Ոչ միայն ազգագրական այս նկարագրություններում, այլև նշանի օրհնության կանոնում և վերջինիս միջնադարյան մեկնություններում նշվում է, որ նշանադրության եկեղեցական արարողության ժամանակ հարսին փրվում է մարանի, գինդ (ականջօղ) և ապարանջան, ուստի մինչ նշանի օրհնության կանոնին անցնելը անդրադառնա՞նք նաև Պսակի ընդհանուր խորհրդին նվիրված Գրիգոր Տաթևացու և նրա ժամանակակից Գեորգ Երզնկացու մեկնությունների շրջագծում նշանի օրհնության մասին եղած բացատրություններին, որոնք օգնում են հասկանալ նաև, թե նշանի օրհնության ընթացքում ընթերցվող մի շարք սուրբգրային հատվածներ հոգևոր ինչ խորհրդով են կապվում այս կանոնի հետ:

7 Բենսե, Նարբ (Մշո Բուկանդիս), Նայ ազգագրություն և բանասիրություն, հր. Գ, Եր., 1972, էջ 26:

8 Վ. Ս. Թեմուրճյան, Գամիքի հայերը, Նայ ազգագրություն և բանասիրություն, հր. 1, էջ 117:

9 Տ. Մկրտիչ, Ամիդայի արձագանքները, Կ. Ա. Ուլիօրն Նիւ Ճերգի, 1950, էջ 401:

10 Գր. Ն. Գալուստյան, Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նիւ Եորք, 1934, էջ 320:

Տաթևացին «Վասն պսակին» խորագրով երեք քարոզ է նվիրել Պսակի խորհրդին: Տաթևացին նշում է, որ պսակը սկսվում է նշանադրությամբ. «Արդ պսակն սկսանի ի նշանադրություն»: Տաթևացին այնուհետև գրում է, որ պսակը «հասարակի հաւանութեամբ սրբից, յորժամ յայրենն բանիւ, զի երկուց կամացն հաւանութեամբ հասարակել գպսակն»¹¹: Սրբերի հավանությամբ հասարակվելը նշանակում է, որ պետք է լինի նշանվողների, ըստ այդմ էլ ամուսնացողների համաձայնությունը, քանի որ երկուսի փոխադարձ հավանությամբ կարող է հասարակվել և կարարվել պսակը:

Տաթևացին այնուհետև անդրադառնում է այն հարցին, թե պսակի խորհուրդը ինչու է սկսվում նշանադրության արարողությամբ. «Բսկ թէ վասն էր դնի նշան», և պալիս է հերեւոյալ գեղեցիկ բացատրությունը. «Որպէս ծառն, որ նախ ծաղկի և ապա պտղաբերի, նոյնպէս նշանն պսակին ծաղիկն է» (Բնգպես որ ծառը նախ ծաղկում է և ապա նոր պտուղ տալիս, այնպէս էլ նշան դնելը պսակի ծաղիկն է, ծաղկելը): Նամաձայն նման բացատրության, պսակը նախ ծաղկում է նշանադրությամբ, ապա և պտղաբերում ամուսնությամբ:

Նշանադրության ընթացքը Տաթևացին համեմատում է նաև Գաբրիել Կրեչարակի՝ Տիրամորը փված Ավերիսի հետ հերեւոյալ գուգահեռով. ինչպէս որ Գաբրիել Կրեչարակապետը նախ ավերիսը փվեց Սուրբ Կույսին, ասելով՝ «ուրախացի՛ր ով շնորհընկալ, Տերը քեզ հետ է» (Ղուկ Ա 28), այնպէս էլ նախ նշան են դնում հարսին: Ինչպէս Մարիամը իր մարմնով խորհում էր, թե ինչ է նշանակում այս ողջույնը. «Սուրբ Նոգին կգա քո վրա», խոնարհությամբ իրեն անվանեց Տիրոջ աղախինը, և ապա հղացավ և ծնեց Ասործո մարմնացյալ և մարդացյալ Բանին, նոյնպէս և «նախ նշան դնի հարսին, իսկ հաւանումն երկուց կամացն՝ հասարակութիւն է պսակին, զի բռնութեամբ և առանց հաւանելոյ միմեանց փեսային և հարսին, ոչ հասարակի պսակ»: Այսպէս Տաթևացին եւս մեկ անգամ շեշտում է, որ նշանադրությունը կարարվում է երկու կողմերի փոխադարձ համաձայնությամբ, քանի որ առանց հարսի և փեսայի միմեանց հավանելու, պսակը չի կարող կարարվել:

Միջնադարյան բնագիտական ըմբռնումների հոգեւոր վերափոխարարմամբ եկեղեցական մի շարք հայրերի հերեւոյալությամբ Տաթևացին եւս գրում է, որ մարանին բոլորաձեւ պարում է այն մարդը, որի երակը մինչև սիրտն է գնում, և նման բոլորաձեւ ու կարարյալ սեր պետք է ունենան հարսն ու փեսան:

Վերստին «Ծննդոց գրքի» հետ փարված գուգահեռով ասում է, թե դրախտում փեսավերներն ու հարսնաձուներն էին Կրեչարակները:

Նոգեւոր նույն վերափոխարարմամբ Տաթևացին նաև գուգահեռ է անցկացնում հավաքի և մարանու միջև՝ որպէս գլխավոր ընդհանրություն նշելով հերեւոյալը. «Որպէս պարուական է նիւթ մարանույն, ոսկի կամ արծաթ, նոյնպէս պարուական և անբիծ է հաւարքն մեր առ Բրիստոս»:

Պսակի խորհրդին է նվիրված նաև Գեորգ Երզնկացու մի խրատը, որի ամբողջական վերնագիրն է. «Երիցս երանեալ Կիլիկիայոյս վարդապետի և քաջ հռչակորի Գեորգեա մեծ վարդապետին արարեալ խրատ վասն պսակի»¹²: Երզնկացին Տաթևացու բառացի հերեւո-

11 Տե՛ս **Գրիգոր Տաթևացի**, Գիրք քարոզութեան որ կոչի Ամարան հատոր, Կ. Պոլիս, 1741, էջ 192-204:

12 ՄՄ, ձեռ. թ. 2335, թերթ 163ա-164բ, փեն նաև «Ընդհանրական մարենագրության», աշխարհ. Պ. Խաչատրյանի և Ն. Քյոսեյանի, Ս. Էջմիածին, 2003, էջ 705-707:

դությամբ գրում է. «Եւ գիտելի է, զի պսակն սկսանի ի նշանադրութիւն եւ հասարակի հաւանութեամբ սրբից»¹³: Այս խրատում նույնպէս շեշտվում է, որ պսակադրությունը քահանան է կատարում: Երզնկացին եւս նշանվել-պսակվել ընթացքը զուգահեռի մեջ է դիտում ծառի ծաղկելու եւ ապա պտղաբերելու հետ՝ այս համեմատությունը, սակայն, ներկայացնելով գեղարվեստորեն առավել ամբողջական եւ գեղեցիկ պատկերով. «Որպէս ծառն, զի նախ ծաղկի եւ ապա պտուղ բերի, զի ծառն ծաղկովն զարդարեալ է եւ ծաղիկն ի ծառն կայացեալ»:

Պսակի խորհուրդը եւ ամուսնության ողջ ընթացքը միջնադարյան Հայաստանում ներկայացնող անգնահատելի մի վավերագիր է Երեւանի Մարենադարանի թ. 3937 ձեռագրի վերջին երեք թերթերին գրված անվերնագիր բնագիրը, որում նկարագրվում է հարսի ընկերությունից մինչեւ նշանդրերն ընկած շրջանի ժողովրդական արարողությունները, ասվում է. «Սովորութիւն է՝ գնալ քահանայիցն եւ փանել նշան եւ այն մարանի, կամ ապարանջան կամ գինդ, որ եր պարտումն, եւ կնիք առ հարսն եւ ի կամս նորա, մինչ զի այլ ոչ գոյ հնար քակել նոցա ի միմեանց»¹⁴:

Այս բնագրից երևում է, որ հեղինակի ապրած ժամանակաշրջանում իրեն հայրնի ազգագրական միջավայրում քահանան փանել է կատարել նշանի օրհնությունը եւ որպէս նշան փարվել է մարանի, ապարանջան կամ գինդ, քանի որ հեղինակը նրանցից որեւէ մեկը չի առանձնացնում եւ երեքն էլ հիշում է **կամ**-երի թվարկմամբ: Ինչպէս երևում է մեջբերվող հատվածի վերջին արտահայտությունից, նշանադրությունը պսակին գրեթե հավասար է դիտվել, քանի որ ասվում է, թե նշանվելուց հետո նշանվողներին չի կարելի անջատել, բաժանել միմյանցից:

Նշանադրության վերը բերված օրինակները, որոնք իրենց արմատներով դարերի խորքն են գնում, լրացնում է Հովհան Օձնեցու կանոնախմբի 16-րդ կանոնը, որում ասվում է. «Իսկ գերկեակսն **նոյնպէս** պարս է ըստ առաջին կարգին միջնորդաւ եւ խառնակաւաւք հաւանեցուցանել յիւրեաց յաւժարութիւն եւ յեկեղեցոյն եւ ի քահանայիցն արքեմութենէ ընդունել զնշան զուգաւորութեան իւրեանց»¹⁵:

Այսպէլ ընդգծված **նոյնպէս** բառը վերաբերվում է նախորդ կանոնին, որում ասվում է, թե պսակվողներին հարկավոր է եկեղեցի փանել, եւ քահանան նրանց վրա պետք է կատարի Պսակի կարգը եւ կանոնը՝ համաձայն քրիստոնեական օրենքի եւ այնպէլ՝ եկեղեցում պսակել, որպէսզի միեւնոյն փրկուին լինեն եւ՝ պսակը, եւ՝ պսակվողները: Այսինքն, քանի որ պսակվողների փրկը եկեղեցին է, ուստի եկեղեցում պետք է կատարվի Պսակի կանոնը: Հաջորդող փաստվեցերորդ կանոնը դիտարկելով որպէս այս կանոնի անմիջական շարունակություն՝ փնտրում ենք, որ այսպէլ արդեն ասվում է, թե պսակվող զույգը պետք է ընդունված կարգով, միջնորդներով եւ հարսնախոսներով միմյանց հավանաւ լինի եւ եկեղեցի գալով քահանայից ընդունի իրենց զուգավորության միավորման նշանը: Այս կանոնում, արտացոլված են հարսնափեսի, խոսք ուզելու, նշանվողների փոխադարձ համաձայնության եւ ըստ այդմ՝ կատարվող նշանադրության փուլերը:

¹³ Անդ, էջ 706:

¹⁴ ՄՄ, ձեռ. թ. 3937, թերթ 193բ, փնս նաեւ Վ. Բոդյան, «Բանբեր Երեւանի Մարենադարանի», 1956, թ. 3, էջ 54:

¹⁵ «Կանոնագիրք Հայոց», աշխար. Վ. Հակոբյանի, հր. Ա, Եր., 1964, էջ 522:

Թե նշանադրությունը ինչ պեղ է գրավել Պսակի խորհրդի և արարողության ընդհանուր շարքում դեռևս Օձնեցու այս կանոնախմբից առաջ և ծխական ինչ կապարում է ունեցել, բավականին հստակ երևում է աստրախոմեական և կամ «Արևիկ յաղթող թագաւորաց քրիստոնէից՝ Կոստանդիանոսի, և Թեոդոսի և Լեոնի թագաւորաց հռովմայեցոց» անվանվող կանոնախմբի 57-րդ հոդվածից: Ինչպես գրում է հայ միջնադարյան ամուսնաընկերական հարաբերությունների համակողմանի հեղափոխող Ս. Նովիանիսյանը, այս կանոնախմբը շարքում հնարավոր է՝ դեռևս Դ-Ե դարերում հունարենով սրբադրվել է հայկական միջավայրում, և եթե անգամ հենց հայկական միջավայրում չի սրբադրվել, ապա միևնույն է, միանգամայն համահունչ է Դ-Ե դարերի հայ կյանքին, կենցաղին և հարաբերություններին, որոնք արտացոլվել են այդ շրջանի պատմիչների գործերում և հայկական կանոնախմբերի հոդվածներում¹⁶:

Այժմ ներկայացնենք այս կանոնախմբի 57-րդ հոդվածը և փորձենք այն քննել մեզ հետաքրքրող հարցի տեսանկյունից: Հիշյալ հոդվածում ասվում է. «Աղջիկ, որ հանդերձի յամուսնութիւն և ի ձեռն տալն՝ տան կնոջն իսաչ կամ մարանի կամ այլ ինչ, և խօսեալ այրն չժամանաեալ ի պսակ, մնառնի, և ընտանիք առն խնդրեն զայնս ի կնոջէն կամ յազգակաւնաց նորին, հրամայէ օրէնքս, զի թէ տեսաւ կինն և կամ համբուրեաց, առնու զկէս իրացն և զմիւս կէսն դարձուցանէ յընտանիսն ի մայրն կամ յեղբարսն կամ յայլ մերձաւոր ազգակաւնս փեսային. և թէ չունի մայր կամ եղբայր, հրաման տալ օրէնքս, զի ամենայն խօսեալ կնոջն մնացել, գոր ինչ տուն յինքն: Ապա թէ խօսնայրն ոչ ետես զկինն, այլ միայն միջնորդութեամբ բարեկամացն ուղղեցեալ բանն, դարձուցանէ կինն գոր ինչ բերաւ այրն ինքեան կամ յազգակաւնսն»¹⁷:

Այսպեղ ուղղակիորեն հիշված չեն նշան կամ նշանադրություն բառերը, բանի որ, ինչպես գրում է Ս. Նովիանիսյանը, Դ-Ե դարերի հայկական կանոններում նշան և նշանադրություն բառերը ընդհանրապես գործածված չեն¹⁸:

Նշանադրության իմաստն այսպեղ արտահայտվում է ամուսնության հանդերձյալ լիներու կապակցությամբ, որի, այսինքն՝ նշանադրության ընթացքում նշանվող աղջկան տրվում է իսաչ կամ մարանի և կամ նշանի գաղափարն արտահայտող մի որևէ այլ նշան: Այնուհետև նշանադրությանը հաջորդում է պսակը, բանի որ, ինչպես հիշյալ կանոնում է ասվում, եթե նշանված «խօսեալ» փեսացուն մինչ պսակին գալը մահանա և նրա հարազատները հետ ուզեն նշանադրության ժամանակ հարսնացուին տրվածը, ապա հնարավոր է երկու տարբերակ: Եթե նշանադրության ժամանակ փեսան տեսել է հարսնացուին և կամ համբուրել, ապա հարսնացուն, որի փեսացուն այնուհետև մահացել է մինչև պսակը, իրավունք ունի իրեն պահելու տղայի կողմից ստացածի կետը, իսկ եթե փեսացուն, կամ ինչպես այս կանոնում է ասվում «խօսնայրն» չի տեսել հարսնացուին, ապա վերջինս պարտավոր է փեսացուի կողմից ողջ ստացածը ետ վերադարձնել:

Այս կանոնում կան նշանադրության բնույթը և ծխական յուրահատկությունը վեր հանող իրար փոխկապակցված երեք կետեր:

16 Ս. Նովիանիսյան, «Ատրական» կամ «Ատրա-հոմեական» կոչված դավաճանագրքի աղերսը հայ իրավունքի հետ, «Պատմաբանասիրական հանդես», Եր., 1970, թ. 2, էջ 176-177:

17 «Ատրական դավաճանագիրք», ձեռագրերի համեմատությամբ լոյս ընծայեց Արսեն վրդ. Դպրեանց, Ս. Էջմիածին, 1917, էջ 27:

Առաջին. նշանադրության ժամանակ փեսացուն կարող է ներկա չլինել: Ինչպես այս գլխում փեսանք, փեսացուն կարող է ներկա չլինել ո՛չ աղջկա փանը փրվող նշանին և ո՛չ էլ եկեղեցում նշանի օրհնությանը: Այս դեպքում (և՛ թե նշանդրերին պսակ չի հաջորդում փեսացուի վախճանվելու պարճառով), փողայի կողմը որևէ պարտավորություն չի ունենում աղջկա հանդեպ, և ըստ այդմ վերջինս պարտավոր է ամբողջապես երբ վերադարձնել նրանց փվածը:

Սակայն եթե փեսացուն ներկա է եղել և համբուրել է աղջկան, ապա նշանադրությունը ամբողջական է համարվում, և աղջիկը իրեն կարող է պահել փողայի կողմից ուղարկվածի կեսը: Վերջինիս պահմամբ, փաստորեն, թեև իրավաբանական առումով, սակայն դարձյալ հստակորեն արտահայտվել է այն ըմբռնումը, որ նշանադրությունը հավասար է կես պսակի:

Երկրորդ. այս կանոնի հնությունն է վկայում այն հանգամանքը, որ այսօրեղ համբուրը համարվում է նշանադրության ձև: Համբուրի, որպես նշանի գաղափարը հստակորեն արտահայտվել է նաև «Սասնա ծռերում», Դավթի և Խանդութի հանդիպման դրվագում, երբ ի նշան Խանդութի համաձայնության, Դավթը, որպես նշանի դրոշմ, համբուրում է նրան: Այս մոտիվը արտահայտվել է «Սասնա ծռերի» Դավթի ճյուղի մի շարք պատմությունում: Էպոսի առաջին՝ 1873 թ. Գարեգին վրդ. Սրվանձաբյանի՝ Տարոնցի Կրպոյից գրառած պատմություն ասվում է.

Ձեռք թալեց Դավիթ Խանդութ խանումի վիզ՝

Ու երեք պագ առեց խանումից¹⁹:

Գարեգին Հովսեփյանի՝ 1892 թ. Ապարանցի Մուրադից գրառած պատմություն ասվում է.

Դավիթ էլավ, գնաց յառեջ ուրանց.

Գնաց, հասավ Խանդութ խանումին,

Գրկվավ, ոչ մեկ, ոչ էրկու, ոչ իրեք,

Հարկը մի վրը իրար պագեց²⁰:

Երրորդ, այս կանոնից երևում է, որ նշանադրության ժամանակ փրվել է խաչ կամ մափանի, ընդ որում նախ խաչն է հիշվում, ապա նոր մափանին:

Նշանադրության ժամանակ աղջկան մափանի փայտ փոխարեն ձեռքին խաչ պահելը եւս վկայում է այս կանոնի բավականին հին արմարներ ունենալու մասին, որը հավասարվում է Պսակի խորհրդի նշանադրության կանոնը պարունակող «Մաշտոց» ծխարանի վաղ շրջանի խմբագրության մեզ հասած ընդօրինակություններով:

Նշանադրության կանոնի՝ մեզ հասած հնագույն երկու օրինակները գտնվում են Երեսուրի Մարենադարանի թ. 1001 և Վենետիկի Մխիթարյան միաբանության հնագույն Մաշտոցում (Ա Մաշտոց, ձեռ. թ. 457): Երկու ձեռագրերն էլ հիշարակարան չունեն և ըստ այդմ չունեն ստույգ թվագրություն, սակայն ելնելով ձեռագրական փայլներից և ձեռագրերի գրչությունից՝ թվագրվում են Թ-Ժ դարերով: Ինչպես նշում է Վենետիկի ձեռագրացուցակի այս հատրումը հիշյալ ձեռագրի նկարագրությունը կարարած Տ. Բ. Սարգիսյանը, Վենետիկի այս Մաշտոցի Բ-Ժ դարերում գրված լինելը հավասարվում է այն հանգամանքով, որ այս-

19 «Սասնա ծռեր», աշխար. Ս. Հարությունյանի, Եր., 1977, էջ 38:

20 Անդ, էջ 83, փեն նաեւ էջ 209, 306, 470:

տեղ բերված են միայն Ե-Ը դարերում գրված շարականներ, օրհնության աղոթքներ և քարոզներ, իսկ Ժ դարից հետո եղածները այս ձևազրույց բերված կանոններից որևէ մեկի մեջ չեն մտնում, այնինչ դրանք կան մնացյալ Մաշտոցների համապատասխան կանոններում²¹:

Թ. 1001 ձևազրույց այս կանոնը վերնագրված է «Կանոն կուսանաց խաչ փոխել»²², իսկ Վենետիկի Մաշտոցում՝ «Կանոն խաչփոխ առնելու»²³:

Այս ձևազրույցի «խաչ փոխել» արարահայտությունը առավել հարազատաբեր է արարահայտում այս կանոնի իմաստը և էությունը, քանի որ քրիստոնեության ընդունումից հետո նշանի մարանիների փոխանակման փոխարեն նշանվողները ձեռքից ձեռք խաչն էին փոխանցում ի նշան նշանադրության:

Խաչփոխի, որպես նշանադրության կանոնի մասին Վենետիկյան Մաշտոցի այս կանոնի նկարագրությունում Ն. Վ. Նացունին գրում է. «Կը դնէ համառօտ արարողութիւն մը, որ կը կայանայ սաղմոսաց ընթերցումից և աղօթից մէջ՝ քահանայի կողմանէ: Վերնագիրը և աղօթքին սա բացատրութիւնը, թէ՛ «համարեացի փոխումն խաչիս, որ առ միմեանս՝ հիմնարկութիւն սուրբ ամուսնութեան», ցոյց կուտայ, որ երկու կողմանէ իրարու ձեռք կանցնէին խաչ մը, խորհրդական դաշինս հնագոյն ու լուսագոյն նշանը»²⁴:

Նացունու կողմից վկայակոչված փոդերում «փոխումն խաչին», այսինքն խաչը իրար ձեռք փոխանցելը հիմնարկելն է սուրբ ամուսնության, որով նշանադրությունը անվանվում է ամուսնության հիմնարկելը: Այս հարվածը մի փոքր այլ ձևով է ներկայացված թ. 1001 Մաշտոցում, ուր ասվում է. «Համարեացի սոցա փոխումն խաչիս նաուկապիք սոցա ընդ միմեանս»²⁵:

Թ. 1001 ձևազրույցի կանոնին մաս են կազմում ութ միավոր, իսկ Վենետիկի Մաշտոցում՝ յոթ միավոր:

Թ. 1001 ձևազրույց այս կանոնը սկսվում է «Երանեալ է, այր որ երկնչի ի Տեառնէ» (Մղմ. ԸԺԱ 1) սաղմոսով, որը վենետիկյան Մաշտոցի չորրորդ միավորն է: Թ. 1001 ձևազրույց այնուհետև գալիս է «Սուրբ խաչիս աղաչեսցուք» քարոզը, և ապա հաջորդում է «Աստուած յախբեմական» սկսվածքով աղոթքը, որում նախ հայցվում է, որ Տերն Իր արարչական գթությամբ խնամի բոլոր արարածներին, և ապա ասվում է, որ ինչպես ամուսնության կարգը սահմանեցիր ըստ Մովսիսական օրենքի և ապա երկինք համբառնալուց առաջ Քո խաչը հասարակեցիր Սուրբ Եկեղեցու հետ միասին, նույն այս խաչով այժմ Տերը թող հեռացնի կեղծավոր մարքերն ու սրահակ խորհուրդները և ամենայն խարդախությունը այս գույգից՝ պահելով նրանց գիշերազնաց խավարից և «խառնանկողնոց պղծութեանց», որով ընդգծվում է ամուսնության և ընդհանրական օրինավոր կյանքով ապրելու կարևորությունը, որից անմիջապես հետո այս աղոթքում ասվում են նշանադրությանը համարժեք եղող և խաչը ձեռքից ձեռք փոխանցելով պահելու մասին խոսքերը: Ինչպես որ նշանադրությանը

21 Տե՛ս «Մայր ցուցակ հայերեն ձևազրույց Մարենադարանին ի Վենետիկ, Մաշտոց-գիրք ձեռնադրութեանց», աշխարհ Ն. Բ. Սարգիսյանի և Ն. Գ. Սարգիսյանի, Վենետիկ, 1966, էջ 8:

22 Տե՛ս «Մայր ցուցակ հայերեն ձևազրույց Մաշտոցի անուան Մարենադարանի», հր. Դ., կազմեցին Ա. Քյոշկերյան, Կ. Սուրբասյան, Ն. Քյոսեյան, Եր., 2008, էջ 10:

23 «Մայր ցուցակ հայերեն ձևազրույց Մարենադարանին ի Վենետիկ», հր. Գ., էջ 23:

24 Ն. Վ. Նացունի, Նայոց ինն հարսանիքը, Կ. Թուրքի, «Ամենուն փարեցոյցը», Կ. Պոլիս, 1912, էջ 201:

25 ՄՄ, ձեռ. թ. 1001, թերթ 94ր, Կ. Կ. Կ. Կ. «Մայր ցուցակ հայերեն ձևազրույց Մաշտոցի անուան Մարենադարանի», հր. Դ., էջ 10:

պսակադրությունն է հաջորդում, այնպես էլ այս աղոթքում հայցվում է, որ Խաչվոխից հեկո՝ «Անու գպսակ վայելչության ի գլուխ սոցա»:

Այս աղոթքին հաջորդում է «Նշանեցաւ առ մեզ լոյս» (Մաղմ. Դ 7) սկսվածքով սաղմոսը: Քանի որ այս կանոնը կոչվում է «Խաչվոխ առնել» և նվիրված է նշանադրությանը, ուստի նրանում իշխում են խաչ և նշան բառերով սկսվող միավորներն ու արպահայությունները: Նարկանշական է, որ նույն «Նշանեցաւ առ մեզ լոյս» սաղմոսով է սկսվում Վենեփիկյան Խաչվոխի կանոնը:

Այս նույն պարճառով թ. 1001 Մաշտոցում նախ բերվում է Պողոս առաքյալի Գաղափարացիների թղթից «Այլ ինձ քաւ լիցի պարծել, բայց միայն ի խաչին Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի» (Գաղաթ. Ձ 14) խոսքերը, որին անմիջապես հաջորդում է Մարթեոսի Ավեփարանի «Եւ ապա երեսեցի նշան Որդոյ մարդոյ» (Մարթ. ԻԴ 30) սկսվածքով ընթերցվածքը: Ինչպես րեւանում ենք, այս երկու ընթերցվածներն էլ սկսվում են խաչ և նշան բառերով: Այս ընթերցվածներին հաջորդող քարոզը ևս սկսվում է նշան բառն ունեցող սկսվածքով. «Վասն գրանելոյ գմեզ նշան»:

Այս կանոնն ավարտվում է աղոթքով, ուր վերստին հայցվում է, որ նշանվողները ապրեն սիրով:

Վենեփիկի Մխիթարյանները ոչ միայն առանձին հարտով հրապարակել են Ս. Ղազարում պահվող Մաշտոցների նկարագրությունը, այլև Մաշտոց ծխարանի կանոններն՝ ըստ իրենց ունեցած ձեռագրերի: Այսպես Պսակի խորհրդին մաս կազմող կանոնները սկսվում են Նշան օրհնելու կանոնով, որին հաջորդում է Նանդերձ օրհնելու կանոնը, որից հեկո՝ Պսակի կանոնից առաջ, գերեզման է «Խաչվոխ առնելոյ» կանոնը²⁶: Այս հրապարակությունը իրականացվել է ԺԹ դարի սկզբին, երբ Ս. Ղազարում չէր ամբողջացել ձեռագրերի, այդ թվում և Մաշտոցների Մխիթարյանների հարուստ ժողովածուն, այլապես այսպես բերված Խաչվոխի կանոնը չէր դիպել առանձին մի կանոն Նշանօրհներին և Նանդերձ (հալավ) օրհներին կանոններին գուցա հետ, այլ կհամարվեր Նշանօրհներին կանոնի սկզբնական փաթեթակը: Մաշտոցի այս հրապարակությունն իրականացնողներին դեռևս հայրնի չի եղել վենեփիկյան հնագույն Մաշտոցը, որի պարճառով վերջինիս Խաչվոխի կանոնը այսպես չկա, իսկ դրա ավելի ուշ խմբագրությունը համարվել է ոչ թե Նշանօրհներին կանոնի հին փաթեթակ, այլ Նշանի և Նանդերձի օրհնության կանոններին գուցա հետ մի կանոն: Թ. 1001 ձեռագրի և վենեփիկյան Մաշտոցի խաչվոխի կանոնների համադրությունը Վենեփիկի փաթեթի Մաշտոցի հեկո ցույց է տալիս, որ վերջինիս խաչվոխի կանոնը առաջին երկուսի ավելի ուշ փաթեթակն է՝ ենթարկված որոշակի վերախմբագրման և ներկայացնում է խաչվոխի, այսինքն՝ նշանադրությունը ձեռքից ձեռք խաչ փոխելով, փոխանցելով կարարելուց անցումը դեպ նշանի մարանիները միմյանց փախում:

Խաչվոխի այս կանոնի սկզբում որպես ծխական հրահանգ ասվում է. «Նախքան գպսակն առնուն գփեսայն, և երթան ի քուն հարսին, և բերեն զհարսն յոքն փեսային և ասեն»²⁷: Ծխական այս հրահանգից երեւում է, որ քոլան ազգականների հեկո գնում է աղջ-

26 «Մաշտոց», արարողությունը պաշտամանը բաղդարությունը բազմաթիւ և հնագիւր օրհնակաց, Վենեփիկ, 1831, էջ 59-61:

27 Անդ, էջ 59:

կա՝ հարսի փուրը ևս հարսին բերում են փեսայի մոտ, ինչպես որ նշանադրության ժամանակ փեսացուն առաջին անգամ գնում է հարսնացուի փուր, և այնպեղ փուրի է ունենում առաջին հանդիպումը՝ Պսակի արարողությունների շրջանակում: Ծիսական այս հրահանգը միանգամայն նման է նշանդրերի՝ վերը բերված նկարագրություններին:

Այնուհետև ասվում է. «Գրի Դալիթ զծառայ Իմ» սկսվածքով սաղմոսի հափվածը, որի «Ձեռն իմ ընկալցի գնա» (ՁԸ 22) փողը համահունչ է Խաչվոխի կանոնին, որում խաչը ձեռքից ձեռք է փոխանցվում:

Սաղմոսի այս փողին համահունչ ձևով, որպես ծիսական հաջորդ հրահանգ, ասվում է. «Եւ առնու քահանայն զաջ ձեռն հարսին, և փայ յաջ ձեռն փեսային», որից հետո ասվում է «Ծննդոց գրքի» երկրորդ գլխի 23-24-րդ փողերի՝ այս կանոնին հարմարեցված մի փարբերակը, որը սկսվում է հետևյալ նախադասությամբ. «Առեալ զձեռն Եւայի, փուրեալ ի յաջն Ադամայ»: Այսպիսով, այսպեղ ևս շեշտվում է ձեռք ձեռքի փոխանցումը:

Հաջորդ միավորում՝ «Նայեա ի մեզ, Տէր» սկսվածքով շարականում ընդգծվում է Ս. Խաչով կապարվող միությունը, ինչպես որ այսպեղ է ասվում. «Պսակեաց Սուրբ Խաչին»:

Ինչպես որ թ. 1001 Խաչվոխի կանոնում նշանվողների համար ասվում էր, որ «համարեսցի սոցա փոխումն խաչիս նաւակարիք սոցա ընդ միմեանս», նույն ձևով շարականի վերջին փուրում այս կանոնը համարվում է խաչով կապարվող նավակարիք. «Այսօր ևս մեր քոնեսցուք գնաւակարիս Սուրբ Խաչին»:

Խաչվոխի բուն կանոնում եթե քահանան խաչը ձեռքից ձեռք էր փոխիս, ապա այսպեղ՝ «Եւ քահանայն դնէ զխաչն ի վերա գլխոյ փեսային ևս հարսին», որից հետո ասում է եզրափակիչ աղոթքը: Վերջինս ևս վերախմբագրությունն ու վերաշարադրանքն է թ. 1001 Մաշտոցի Խաչվոխի կանոնի երկու աղոթքների, իսկ առանձին փողեր նաև համընկնում են:

Խաչվոխի Վենետիկյան հրապարակության կանոնն ավարտվում է «Սուրբ խաչիս», «Պահպանիչ», «Օրհնեալ Տէր» և «Հայր մեր» ասելով:

Նշանադրության խաչվոխի կանոնին այնուհետև հաջորդող դարերում փոխարինում է Նշանի օրհնության կանոնը, որի մասին վենետիկյան Մաշտոցների օրինակով Ն. Վ. Հացունին գրում է. «Վենետիկոյ 1338, 1436, 1466, 1499 և այլ փարիներու Մաշտոցաց մէջ այլևս չկայ այս կանոնը: 1345-ի օրինակը գրուած է ի Սիս, մարանույ փուշութիւնը կը խառնէ պսակման հանդիսին մէջ, իսկ նշանադրութեան համար կը դնէ լոկ այս սնապաշտական ձեռք. «Յառաջագոյն պոմն (՝) թողոք լինի այրել ևս հաճութեամբ ընդ միմեանս կապել» խօսեցեալները: Ի՞նչ կը հետևի ասկից, որ այդ շրջանին եկեղեցական նշանադրութիւնը շարքերէ ջնջուած էր: Վենետիկոյ բազմաթիւ Մաշտոցաց համեմատութենէն փեսայ, որ դէպ ի ԺԶ դարու կէսը վերադին կ'սկսի երևիլ այն, ևս այնքան դանդաղօրէն կը փարածուի, որ շարք օրինակաց մէջ մինչև ԺԷ դարու վերջերը դեռ չէ մարեր»²⁸:

Եթե մի կողմ թողնենք Հացունու հիշատակած Ս. Ղազարի թ. ԺԳ Մաշտոցը, որը գրվել է 1345 թ. և հայրնի է Սսեցոց Մաշտոց անվամբ, ուր Նշանադրության կանոնը ներկայացվում է Պսակի կանոնի և արարողության շրջանակում, ապա համաձայն Վենետիկի Մաշտոցների նկարագրության ցուցակի՝ այսպեղ պահվող և մինչև ԺԶ դարը գրված 63 Մաշտոցների շարքում չկա Նշանադրության կանոնն ունեցող և ոչ մի Մաշտոց: Այս շարքում

28 Ն. Վ. Հացունի, Հայոց երկն հարսնիքը, էջ 201:

առաջինը ԺԶ դարում գրված էր Վենետիկի ԿԴ (64-րդ) համարը կրող Մաշտոցն է, ուր հին ավանդույթով Պսակի կանոնին նախորդող Նշանի օրհնության կանոնը անվանվում է «Կանոն խաչվոխ առնելու»²⁹:

Ցավոք, այսօրվա բերված է կանոնի միայն հիշյալ վերնագիրը, սակայն ո՛չ կանոնի սկիզբը և ո՛չ էլ այդ կանոնին մաս կազմող որևէ այլ միավոր հիշված չէ, որպեսզի հնարավոր լինի կողմնորոշվել, թե սա արդյո՞ք դարձյալ խաչվոխի կանոն է, թե այսպես է անվանվում Նշանի օրհնության արդեն նոր խմբագրության կանոնը:

Երևանի Մալենադարանի թ. 956 ձեռագրում, որը 1536 թ. Զեյթունում գրված Մաշտոց է, Պսակի օրհնության կանոնին նախորդում է հետևյալ կանոնը. «**Կանոն խաչ փոխելու, որ է ձեռն քալ** (լուսանցքում՝ «խաչեղբարք»)-երթան ի դուռն եկեղեցոյն և ասեն Սաղմոս. Խոնարհեցոյց...»³⁰:

Այժմ ներկայացնենք Նշանի օրհնության միջնադարից ավանդված, ապա և պապագիր Մաշտոցներում և ի մասնավորի՝ 1807 թ. Կ. Պոլսում հրատարակված Մեծ կամ Մայր Մաշտոցի, ինչպես նաև Գևորգ Դ Կաթողիկոսի՝ Վաղարշապատի Մաշտոցի հրատարակությունում քննարկված կանոնները՝ դրանք գուցե հետագայում մեջ դիպրելով Երևանի Մալենադարանի թ. 953 ձեռագրի Մաշտոցի հետ: Ձեռագիր Մաշտոցներից մենք ընտրել ենք հենց այս մեկը, քանի որ, համաձայն Ս. Նովիանինյանի, այն թեև ընդօրինակվել է 1651-1656 թթ., սակայն լավագույնս է ներկայացնում Պսակի խորհրդի նախորդող շրջանից եկող կանոնները³¹:

Թ. 953 ձեռագրի և Վաղարշապատի պապագիր Մաշտոցի հետ մեծապես համահունչ է նաև Վենետիկի պապագիր Մաշտոցը: Նշանի օրհնության կանոնը պարունակող ձեռագրերի նկարագրությունների ընկալումը վկայում է, որ օրհնության կանոնի թ. 953 ձեռագրի պարբերակը ամենահաճախակիներից է: Թեև Ն. Վ. Նազունին գրում է, որ խաչվոխից հետո Նշանի օրհնության կանոնը վերստին ի հայտ է գալիս ԺԶ դարից, ինչպես որ է Ս. Ղազարի ձեռագրային հավաքածուների մեջ, սակայն Երևանի Մալենադարանի միջև 1800 համարն ընդգրկող ձեռագրերի շարքում այն հանդիպում է ԺԵ դարում գրված երկու ձեռագրերում՝ թ. 965 (գրված 1432 թ.) և թ. 958 (գրված 1473 թ.)³²:

Ինչպես թ. 953 ձեռագիրը, այնպես էլ Վաղարշապատի պապագիր Մաշտոցը սկսվում են քահանայի՝ նշանվողներին տրվող հետևյալ կանոնական խրատով, որում հրահանվում է, որ Նշանի օրհնության կարգը կատարելուց առաջ քահանան քննի և տեսնի, թե արդյո՞ք նրանք չեն խախտում հոգևոր և մարմնավոր ազգակալության կարգը: Նոգևոր ազգակալություն ասելով՝ նկատի ունի, որ իրար հետ չամուսնանան կնքահայրն ու սանիկը: Նրահանվում է սպուգել նաև ամուսնացողների տարիքը: Ըստ այս խրատի, թ. 953 ձեռագիրը փնտայի համար սահմանում է տասնհինգ, իսկ հարսի համար՝ տասնմեկ տարեկան հասակը: Վաղարշապատի պապագիր Մաշտոցը, սակայն, տղայի տարիքը սահմանում է տասնութ, իսկ աղջկանը՝ տասնվեց:

Խրատում այնուհետև ասվում է. «Եւ դիցեն ի վերա սկսելո առաջի փնտային, մարա-

29 «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մալենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ», հր. Գ, էջ 411:

30 «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մալենադարանի», հր. Գ, կազմեց Օ. Եզանյան, Եր., 2007, էջ 1428:

31 Տե՛ս Ս. Նովիանինյան, Ամուսնաբնական իրավունքը վաղ ավարական Հայաստանում, Երևան, 1976, էջ 35:

32 «Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մալենադարանի», հր. Գ, էջ 1495, էջ 1440:

նի եւ ապարանջան եւ գինդ: Եւ առնու քահանայն զօրհնութեան գինին ի ձեռն: Եւ մեկնեացէ զխորհուրդ նշանին ունել ի ձեռն եւ զխաչն զայն, զոր օրինակ է քրիստոնէից խաչվոյս առնելոյ»³³: Վաղարշապատի քաղաքի Մաշտոցում հիշվում են նաև «կարմիր շալ եւ քող», փոխարենը, սակայն, որևէ հիշարակություն չկա խաչ պահելու եւ խաչվոյսի մասին: Այս հանգամանքը վկայում է թ. 953 ձեռագրի հնության մասին, ուր արտացոլվել է սկզբնապես նշանի՝ ձեռքից ձեռք խաչի փոխանցումով կարարվելը:

Խորարի վերջում քահանաներին հրահանվում է բացառել նշանադրության իմաստը եւ ասել, որ այն նոր հնարված կարգ չէ, այլ ունի Գաբրիել հրեշտակապետի՝ Մարիամին քրված Ավերիսի խորհուրդը: Այս խոսքերից կարելի է եզրակացնել, որ իրապես, ինչպես Ն. Վ. Նացունին է գրում, խաչվոյսից հետո Նշանի կանոնը միառժամանակ չի կարարվել եւ երբ վերստին սկսել է կարարվել, որպեսզի այն նորամուծություն չթվա, անհրաժեշտ է համարվել բացառել Ավերման հետ քարվող գուգահեռով, ինչպես որ արդեն փեսանք: Տաթևացին եւս նման գուգահեռ է անցկացնում:

Երկրորդ՝ հիշյալ խորարի վերջին մասը միայն այս Մաշտոցում կա, ուր դարձյալ Տաթևացու հեղեղությամբ ասվում է, որ մարանին դրվում է չորրորդ մարին, որն ունի սիրտը քանող երակը եւ ցույց է տալիս, որ հարսը սրտով հավանեց փեսային:

Տարսի ձեռքին դրվող ապարանջանը ցույց է տալիս, որ հնագանդությամբ կապվեց փեսային:

Գինդի համար, դարձյալ Տաթևացու հեղեղությամբ գրում է, որ այն ցույց է տալիս, թե ականջով լսեց եւ մտքով հավանեց:

Կարմիր շալը եւ քողն էլ խորհրդանշում են, որ «Ճմարտապես հարսնացաւ մանկանն, որում նշանեցաւ»:

Թ. 953 ձեռագրում եւ Կ. Պոլիսի Մայր ու Վեներիկի քաղաքի Մաշտոցում նշանի օրհնության կարգը սկսվում է «Խորհուրդն անճառ ծածկեալն» շարականով, որը նվիրված լինելով Ավերման՝ մեկ անգամ եւս շեշտում է Ավերմոմ-Նշանադրություն գուգահեռը, քանի որ ինչպես Նշանին հաջորդում է Պսակը, այնպես էլ Ավերիսին՝ Ծնունդը: Վեներիկի Մաշտոցի հրապարակիչները այս շարականից հետո ունեն հետևյալ նշումը. «Իսկ եթէ կամիս այս ասա» եւ բերում են «Նըշանաւ ամենայաղթ խաչիդ» շարականը, որով սկսվում է նաև Վաղարշապատի Մաշտոցի կանոնը: Այսպիսով, այս կանոնի առաջին միավորը համընկնում է հիշյալ երեք Մաշտոցներում:

«Առակաց գրքի» «Որդեակ եթէ իմաստուն լինիցիս» սկսվածքով գլուխը հարսնացուին եւ նրա պահվածքին ուղղված խորար կարելի է համարել, ինչպես որ այսօրեղ է ասվում. «Կին անզգամ եւ յանդուգն կարօք լիցի հացի, եւ որ ոչ գիտէ զամօթ՝ նստաւ առ դրոմս քան իւրոյ...» (Առակ Թ 13): Շարունակվող նման խորարներով այս հարվածը ունեն թ. 953 ձեռագիրը եւ Վաղարշապատի Մաշտոցը: Նաջորդ ընթերցվածը «Երգ երգոցից» է, որն ունեն երեք Մաշտոցներն էլ: Այս հարվածն էլ փեսացուին ուղղված խորար կարելի է համարել:

Նաջորդ՝ Ովսե մարգարեից բերված ընթերցվածը եւս ունեն երեք Մաշտոցները: Այս հարվածի «Արձակեցին ոստը նորա եւ եղիցի իբրեւ զձիթենի պողալից» (Ովսե ԺԴ 7) եւ հաջորդող քողերը արդեն կարելի է համարել նշանվողներին եւ նրանց սպասվող արգասա-

33 ՄՄ, ձեռ. թ. 953, թերթ 189ա:

բերությանն ուղղված մի մաղթանք:

Դարձյալ երեք Մաշտոցներն էլ ունեն Եսայի մարգարեից, Պողոս առաքյալից, ինչպես նաև Դուկասի Ավետարանի Ավետմանը վերաբերվող հարվածի ընթերցվածները:

Սուրբգրային ընթերցվածներին հաջորդում է աղոթքը, որը նույնն է թ. 953 ձեռագրում և Վաղարշապատի Մաշտոցում և Կարբեր՝ Վենետիկյան հրապարակությունում: Առաջին երկու Մաշտոցների աղոթքը ևս սկսվում է Ավետման օրինակով, որը նույնպես վկայում է, թե եկեղեցական խորհրդաբանությամբ ինչ կարևորություն է փրվել Ավետիս-Նշանադրություն գուգահեռին:

Առավել հնադրոշմ է և վաղ շրջանի կնիքն ունի աղոթքի՝ Վենետիկի Մաշտոցի Կարբերակը, որի առաջին միջին «Խաղաղություն ամենեցուն» խոսքերը հասնող հարվածը գրեթե նույնանում է թ. 1001 Մաշտոցի համապատասխան հարվածի հետ:

Քանի որ այս աղոթքը գալիս է Խաչվոխի կանոնից, ուր նշանադրության ժամանակ խաչն է ձեռքից ձեռք փոխանցվել, այսպես ասվում է. «Տուր Տէր և այժմ զխաչս զայս ի գործութիւն և յամբոթիւն ապաւինեցոս ի Քեզ»: Այս հանգամանքը չի վրիպել Վենետիկի Մաշտոցը հրապարակողների ուշադրությունից, և նրանք խաչ բառի վրա աստղանիշ դնելով՝ փալիս են հետևյալ ծանոթագրությունը. «Ծանի՛ր, զի հինք փոխանակ աշխարհային իրաց զՍուրբ Խաչն փայլն ի նշան հարսնախօսութեան»³⁴: «Աշխարհային իրաց» խոսքերով հրապարակիչները նկատի ունեն նշանադրության ժամանակ փրվող մարանին, զինող և ապա-րանջանը, որոնց փոխարեն այսպես հիշվում է խաչը:

Աղոթքին հաջորդում է քահանայական օրհնությունը փրվող նշանին: Կարարվող օրհնության մասին Վաղարշապատի Մաշտոցում ասվում է. «Եւ ապա զմարանին դնէ ի չորրորդ մարն (ճկոյթամայր) աջոյ ձեռի հարսին, և զապարանջանն ի բազուկն, զգինոյ յա-կանջսն և զքօղն ձգէ ի գլուխն»³⁵:

Ծիսական այս ընթացքը հնության առավել դրոշմ ունի թ. 953 ձեռագրում. «Եւ փայ զխաչսն պահպանութիւն, իսկ զմարանին և զապարանջանսն դնէ ի ձեռն: Եւ զօրհնեալ բաժակն արբուցանէ նոցա: Եւ զգուշացուցանէ երկիւղիւ կալ»³⁶: Ինչպես տեսնում ենք, այս-պես ևս շեշտված հիշողությունը կա Նշանի օրհնության խաչով կարարվող և առավել հին Կարբերակը եղող խաչվոխի կանոնի:

Վաղարշապատի և Վենետիկի Մաշտոցներում այս օրհնությանը հաջորդում են «Սուրբ խաչիս» քարոզը, ապա Պահպանիչ է ասվում և կանոնն ավարտվում է «Նայր մե-ր»-ով: Թ. 953 ձեռագրում, սակայն, չկան այս երեք միավորները, քանի որ թե՛ այսպես և թե՛ Կ. Պոլսի Մայր Մաշտոցում կանոնը շարունակվում է զգուշության խրատով, որը քահանան փալիս է նշանվողներին: Այս խրատի ամբողջական վերնագիրն է «Խրատը զգուշութեան ու-սուցանէ քահանայն հանդերձեցն պսակ առնուլ կանխաւ»: Ինչպես վերնագրից է երևում, սա մի խրատ է, որը կանխավ, այսինքն նշանադրության ժամանակ փրվում է նրանց, ով-քեր պարտաստվում են պսակվելու: Որպես քահանաներին ուղղված հրահանգ, այս խրա-տի սկզբում ասվում է, որ նշանադրող քահանան այն եթե չկարդա ո՛չ Նշանի օրհնության

³⁴ Անդ:

³⁵ «Մաշտոց», Վաղարշապատ, 1898, էջ 119:

³⁶ ՄՄ, ձեռ. թ. 953, թերթ՝ 193ա:

ժամանակ էլ ոչ էլ հեքո Պսակի ժամանակ, ապա ինքն է պարասխանաբո լինելու պսակ-վողների գործածների համար՝ «ինքն քացե զվրէժս անձանց նոցա ի յար դարաստանին», քանի որ նրանց չի զգուշացրել իրենց պարավորությունների և Պսակի Ս. Խորհրդի մասին:

Քահանան այնուհետև հարցնում է, թե հանձն առնո՞ւմ են միմյանց հանդեպ աստվածավանդ սիրով և առ Աստված երկյուղով կրել կյանքի բոլոր նեղություններն ու դժվարությունները և հարկապես մարմնական հարվածները, եթե դրանք հասնեն ամուսիններից մեկին, ինչպես օրինակ «զկոտություն, զկաղություն, զերկար կամ զանբժշկելի հիւանդության և զայլոց վրանգից»:

Ի պարասխան քահանայի այս հարցման, նշանվողներն ասում են՝ այո: Քահանան այնուհետև հարսի աջ ձեռքը դնում է փեսայի աջ ձեռքում և ասում, որ աստվածադիր կարգի և հրամանի համաձայն հարսին քալիս է փեսային «ի հնազանդութիւն», և հարցնում է. «Տէ՛ր ես»: Փեսան ասում է. «Տէ՛ր եմ կաման Աստուծոյ»: Ընդունված կարգով այնուհետև հարսին է հարցնում. «Ննազա՞նդ ես», հարսը պարասխանում է. «Ննազանդ եմ ըստ հրամանին Աստուծոյ»:

Ասվում է, որ փեսային և հարսին ուղղված այս հարցումը կրկնվում է երեք անգամ, և երբ երեք անգամ էլ նրանք հաստատական պարասխան են քալիս, նշանադրությունն ավարտվում է քահանայի օրհնության մատթանքով, որում ասվում է, որ եթե այս օրինակով միմյանց հանդեպ մնաք աստվածային սիրով, ապա Աստծո խնամքն էլ կպահի ձեզ և «օրհնեսցէ զգործս ձեռաց ձերոց և աճեցուցէ զձեզ հոգեկանօք և մարմնականօք»³⁷:

Ի քարեկոթություն մյուս երեք խմբագրությունների, որոնք ավարտվում են նշանի մատանով, զինդերի և ապարանջանի օրհնությամբ, թ. 953 ձեռագրում այս կանոնի շարունակության մաս են կազմում նաև փեսայի քրե ու հարսի հնազանդ լինելուն վերաբերվող հարցումները, որոնք մյուս Մաշտոցներում գրվում են Պսակի կանոնում, ուստի հիշյալ ձեռագիրը հարազատորեն ներկայացնում է հնավանդ այն ըմբռնումը, որ նշանադրությունը կես պսակն է և ըստ այդմ, նշանադրության ժամանակ համաձայն այս կանոնի կատարվում է հոգևոր միությունը, ինչպես որ ազգագրական նկարագրություններում Նշանը եր քալը մեծ մեղք էր բաժանությունը գրեթե հավասար էր դիվում, իսկ Պսակին այնուհետև հաջորդում է արդեն ամուսնական միությունը:

Նշանադրության կանոնի բերված այս խմբագրություններից բացի, պայմանավորված քրեային ավանդույթով և ազգագրական մի շարք սովորույթներով, հանդիպում են Նշանօրհների կանոնի եւս մի քանի մասնակի խմբագրություններ, որոնք սակայն, առանձնապես մեծ քաղաքում չունեն:

Նշանօրհության վերը բերված խմբագրություններում որևէ ակնարկ չկա այն մասին, թե որքեղ է կատարվում Նշանի օրհնությունը, այնինչ, ազգագրական ավելի շեշտված դրոշմ կրող այս քարեկոթություն հստակորեն մարմանավորում է, որ Նշանի օրհնությունը կատարվում է քանը:

1669 թ. Արծկեում գրված ու Երևանի Մարենադարանում պահվող թ. 886 ձեռագրում Նշանօրհների կանոնը ունի հետևյալ խորագիրը և սկսվածքը. «**Կանոն որպիսութեան նշան դնելոյն անթերի**»-Յառաջև երթան քահանայքն և սարկաւագունքն և քանու-

37 Անդ, թերթ՝ 196թ:

տեսարանն ի փուն փեսային...»³⁸: Համանման ձևով ԺԷ դարում գրված և Երեսունի Մարենա-դարանում պահվող թ. 1031 ձեռագրում է ասվում. «Դանուն յորպիսութեան նշան դնելոյ-Յա-ռաջն երթան քահանայքն և սարկաւագունքն ժողովորդ ի փուն փեսային...»³⁹, որից հետո հանդիսավորապես շարժվում են դեպ հարսի փուն՝ այնպիսի նշանադրությունը կատարելու:

Այսպիսով, ամփոփելով ասելը, որ նշանադրությանը որպես կես պսակի՝ պսակադրության նախադրան, առանձնակի կարևորություն է փոխել հայ կյանքում և անկախ ազգագրական տարբեր շրջաններում արարողության կատարման որոշակի յուրահատկություններից, այն վավերական է համարվել միայն քահանայի օրհնած նշանը՝ մատանին կրելուց հետո, որով նվիրագործվել է ու Պսակի խորհրդի հետ միասին իր կարևոր նպաստը բերել հայ ընտանիքների ամրությանը և ամուսնացողների՝ միմյանց հանդեպ ունեցած բարոյական փոխադարձ պարտավորություններին:

38 «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մարենադարանի», հր. Գ, էջ 1093, փեւ նաեւ ՄՄ, ձեռ. թ. 886, թերթ՝ 12ա:

39 «Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Մաշտոցի անուան Մարենադարանի», հր. Դ, էջ 125: